THE WORLD BANK

Working for a World Free of Poverty

ԼՐԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լրատվական հաղորդագրություն
2012/267/ԵԿԱ

Հայաստանի 50 կարիքավոր համայնքներ կօգտվեն ներդրումներից

Համաշխարհային բանկն օժանդակում է անապահովներին ուղղված համայնքային ներդրումներին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 14 փետրվարի , 2012թ. Համաշխարհային բանկի Գործադիր տնօրենների խորհուրդն այսօր հաստատել է 11 միլիոն ԱՄՆ դոլար գումարով վարկ **«Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ III» ծրագրի (ՀՄՆՀ III)** երրորդ լրացուցիչ ֆինանսավորման համար: Լրացուցիչ ֆինանսավորմամբ հավելյալ աջակցություն կցուցաբերվի Հայաստանի կառավարության՝ անապահով և խոցելի խմբերի կենսամակարդակի բարելավմանն ուղղված ջանքերին՝ ենթակառուցվածքների աշխատատար նախագծերի ընդլայնման միջոցով՝ արձագանքելով տեղական համայնքների կենսական կարիքներին:

Ծրագիրը կենտրոնանում է «ենթակառուցվածքի բացերի» վրա՝ Հայաստանում միջնակարգ և հատուկ դպրոցների, մանկապարտեզների, մարզադահլիճների և խաղահրապարակների, առողջության առաջնային պահպանման բուժիմնարկների, խմելու ջրի խողովակաշարերի և ջրահեռացման համակարգերի, մշակույթի և սոցիալական ծառայությունների համայնքային կենտրոնների, ոռոգման փոքր համակարգերի վերանորոգման և վերականգնման միջոցով: Այս առումով իրավիճակը հատկապես լուրջ է Հայաստանի գյուղական վայրերում, առավել ևս՝ հեռավոր և մեկուսացած համայնքներում և երկրաշարժի գոտում: Ծրագրի թիրախը տնտեսական ճգնաժամի հետևանքով առավել ազդակիր բնակչությունն է. լրացուցիչ ֆինանսավորումը կօգնի միջնաժամկետում հոգալ վերը նշված և այլ կարիքները:

«ՀՄՆՀ հիմնական ուժեղ կողմը տեղական համայնքներին՝ իրենց ներդրումային կարիքները վեր հանելու հնարավորություն ընձեռելու մոտեցումն է»,- ասաց **Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն պրն. Ասադ Ալամը:** *«Առաջարկվող ծրագիրն ուղղակիորեն կօժանդակի 50 գյուղական համայնքների : Ներկայիս միջավայրում խիստ անհրաժեշտ աշխատատեղեր ստեղծելուց զատ ծրագրի հաջողությունը պայմանավորված կլինի նաև նրանով, թե տեղական համայնքները որքանով կկարողանան պահպանել այս նոր ներդրումները»:*

Մեկուկես տասնամյակ է, ինչ ՀՄՆՀ-ն բարեհաջող գործունեություն է ծավալում: Մինչ օրս ՀՄՆՀ III-ի շրջանակում ավարտին է հասցվել համայնքային ենթակառուցվածքների 233 միկրոծրագիր, ևս 27-ը գտնվում է իրականացման ընթացքում: Իրականացված միկրոծրագրերով ստեղծվել է ավելի քան 447,000 օր զբաղվածություն, իսկ կարճաժամկետ զբաղվածության համար վարձատրության եկամուտը կազմել է 7.23 միլիոն ԱՄՆ դոլար: Ծրագրով նաև ֆինանսավորվել է ողջ երկրում տարրական դպրոցների 802 դասասենյակների համար դպրոցական կահույքի ձեռքբերումը:

«ՀՄՆՀ միկրոծրագրերն անապահովների կարիքներին արձագանքելու և առավել աղքատ շրջաններում փոքրածավալ, աշխատատար համայնքային ենթակառուցվածքների ծրագրերին օժանդակելու և աշխատատեղեր ստեղծելու միջոցով հեռավոր ու մեկուսացած գյուղերում տնտեսական աճի խթանման արդյունավետ գործիք են»,- **ասաց Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի ղեկավար պրն. Ժան-Միշել Հապին:**

Լրացուցիչ ֆինանսավորումը կօժանդակի ենթակառուցվածքների վերականգնմանն ու բարեկարգմանն ուղղված շուրջ 50 միկրոծրագրի իրականացմանը և կստեղծի մինչև 140,000 օրվա աշխատանքի կարճաժամկետ զբաղվածություն: Առաջարկվող ծրագրի շրջանակում շուրջ 20 դպրոց և մանկապարտեզ և 5 համայնքային կենտրոն կապահովվի կահույքով:

ՀՄՆՀ III ծրագիրն ունի երկու հիմնական բաղադրիչ: Այն օժանդակում է **համայնքային ներդրումներին** Հայաստանի ամենաաղքատ համայնքներում փոքրածավալ սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վերականգնման միջոցով: Նշված ներդրումները կատարվում են համայնքների կողմից առաջնորդվող զարգացման մոտեցման հիման վրա, որի համաձայն համայնքները պատասխանատու են իրենց սեփական առաջնահերթությունների բացահայտման, իրենց միկրոծրագրերի ֆինանսավորմանը մասնակցելու, մոնիտորինգի և իրականացմանն օժանդակելու և միկրոծրագրերի ավարտից հետո դրանց պահպանման համար:

ՀՄՆՀ III ծրագիրը նաև համայնքային ներդրումները լրացնում է **տեղական մակարդակում ինստիտուցիոնալ հզորացման և կառավարումը, մոնիտորինգն ու գնահատումը կատարելագործելու համար կարողությունների ստեղծման միջոցով՝** համայնքային ներդրումների և ծառայությունների մատուցման որակի և կայունության բարելավելման, պատասխանատվության բարձրացման և տեղական մակարդակում շահագրգիռ կողմերի հնարավորությունների ընդլայնման նպատակով:

«Հզորացվում են համայնքների ավագանիների, դպրոցների խորհուրդների և միկրոծրագրեր իրականացնող մարմինների կարողությունները՝ իրենց ներդրումների արդյունավետ ծրագրավորման ու կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ գործընկերությունների ամրապնդման համար, որի արդյունքում մինչ օրս ուսուցում է ստացել համայնքների ավելի քան 4,700 անդամ»,- ասաց **Համաշխարհային բանկի ծրագիրը նախագծող թիմի ղեկավարը պրն. Իվան Դրաբեկը:** *«Ավելին, Հայաստանի բոլոր մարզերից 105 համայնքների 515 ղեկավարների, ֆինանսիստների և ավագանու անդամների համար*

հաջողությամբ իրականացվել է համայնքային ֆինանսական կառավարման վերաբերյալ ուսուցում»:

Լրացուցիչ ֆինանսավորման ընդհանուր գումարը 14.6 միլիոն ԱՄՆ դոլար է, որից 2.9 միլիոն ԱՄՆ դոլարը հատկացնելու է Հայաստանի կառավարությունը, իսկ 0.7 միլիոն ԱՄՆ դոլարը տրամադրվելու է շահառու համայնքների կողմից: 11 միլիոն ԱՄՆ դոլար գումարով ՄԶԸ վարկի մարման ժամկետը 25 տարի է՝ ներառյալ 5 տարի արտոնյալ ժամկետ:

1992 թվականին Համաշխարհային բանկին և 1993 թվականին ՄԶԸ-ին անդամակցելուց ի վեր Հայաստանի նկատմամբ ՄԶԸ և ՎԶՄԲ ընդհանուր հանձնառությունները կազմում են 1, 517 միլիոն ԱՄՆ դոլար:

Պատասխանատուներ.
Երևանում՝ Վիգեն Սարգսյան, (374 10) 52 09 92, vsargsyan@worldbank.org
Վաշինգտոնում՝ Ջոնաթան Դալի, (202) 123-4567, jdaly@worldbank.org
Հեռարձակման հարցով դիմումներ՝ Նատալիա Սիեսլիկ, (202) 458-9369, ncieslik@worldbank.org

Հայաստանում Համաշխարհային բանկի գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք
http://www.worldbank.org.am կայքէջը: